

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՃԱՌ ԱՂՕԹԻՑՆ\*)

[Նախագրութիւն]

Տէր եթէ զշրջունսն .Ե. փոխիւ, զգայարանացս է թիւն, ամբաստանութիւն ի վերայ սատանայի, կանոնին .Հ. զորդայքն, և աւուրց շաբաթուց, և և դարուն Հարցն, Աղամայ յարութեանն, և Մեծացուցէն և Ողորմնայն, Եւայեանց ազատութիւնն. Տէր յերկնիցն, ի յարութեան աւուրն հրեշտականալն ընդ հրեշտակն:

Է Արեւագալն. Վասն յարութեան ի նոյն ժամն, և ստեղծա 10 ման մարդոյն, և ծագման աստուածեան լուսոյն երակի:

Դ Արդն Աղամ յԵրրորդ ժամու պատրի ի ծառն. և Տէրն ի սոյն ժամու խաչիւ դատապարտի: Եւ սուրբ Հոգին ի սոյն մխիթարիչ. և Գալուստն երկրորդ ի 15 սոյն:

Դ Ասսարակ աւուրն. Տրտում տիսուր խաւարազգած մտաւք նախահայրն. Վասն որոյ Տէրն առեալ զնոյն յինքն ի վերայ խաչին:

Է Ճինգերորդ արեգական մտանելոյն և ծագմանն. Տեառն 20 ծագմանն՝ միշտ մնալոյ, զմուտ և զել մեր գուշակելով. և ընդ է անգամն աղօթելն սովաւ է. զի առաքելական է սահմանս այս, քան ամենայն որ է բաժանի: Որպէս Աղամ և Եւայ զմահու պտուղն ի սիրտս իջուցին ճաշակմամբն, նոյնպէս Քրիստոս աստուածն մեր 25 ի սիրտս առաքելոցն. և այժմ և մինչ ի կատարած զկենացն դեղն յամենայնի ի սիրտս իջուցանէ, զիւրն տալով զանմահութիւն և զկեանս:

\*.) «Արարատ» Յունուար-Փետրուար. 1916 թ. էջ 129—144.

վասն Նախերգանի տղաւրից, որ ի մէջ զիւերի  
կատարի.

[Ա. ԳԼՈՒԽ]

372<sup>ա</sup> Որպէս նեղեալ ոք ի չար թշնամեաց և եկեալ  
5 մաղթէ առաջի արդար դատաւորին Աստուծոյ, առնել  
ընդարձակութիւն վրդովմանցն, և սուրբ Եկեղեցի հայցէ  
համարձակութեամբ բանալ զբերանն, և պատմել զնեղ-  
չացն ի վերայ եկեալ գոլեկոծութիւնսն ասելով, «Տէ՛ր  
զի ռազում՝ եղեն նեղիչք իմ»։ և ամրացուցեալ հինգ  
10 սաղմոսիւքն զհինգ զգայութիւնս, զաղաւթսն յաջորդեալ  
372<sup>բ</sup> ծանաւթս կացուցանէ. վասն որոյ աղաջէ աւգնա-  
կան լինել, զի խորտակեսցէ զյարձակումն Ականացն.  
և ոչ անտես առնէ զմարդասիրութեամբ իւրով մարդիկ,  
և բարեգթութեամբ յողորմութենէ Փրկչին մերոյ խնդրէ,  
15 «Զի լցոյց շարչարանաւք զնոզի իմ»։ և որ զկնի սաղմոսն  
պատմէ զզանազան փորձութիւնս ի վարարկեալ որպէս  
և վարմ։ Զայս ամենայն կիրս տեսանէ եկեղեցի ան-  
ցեալ ընդ ինքեան, բայց ոչ լքանի յարարչական խնա-  
մոցն, այլ յիշէ յիսկզբանն զհայրական գութն, զի ի  
20 բարձրութենէ խոնարհեցաք տրտմութեամբ ի վերին  
խարսխեալ ամբութեամբ, և գոչէ քաջալերաբար հրա-  
մանաւ ինքեան, «Արնեան անծն իմ զտէր եւ ամենայն  
ոսկերք իմ՝ զանուն սուրբ նորա»։ Զի մի մոռասցի զա-  
մենայն սքանչելիսն, զոր արար Աստուած զառաջինսն,  
25 որ պսակելոց է զկամարարսն իւր ողորմութեամբ, զուար-  
ճացեալ յուսովին հրամայել վերին զաւրացն, որոց տե-  
սանէ զինքն յաւղեալ փառակցութեամբ աւրհնել զԱս-  
տուած։

Յես Ընդարձակ Ա Նախաղբութիւն, «Ասացին ճառն . . .  
Որպէս նեղեալ ոք ի չար թշնամեաց եկեալ մաղթէ առաջի արդար  
դատաւորութեանն Աստուծոյ առնել ընդարձակամտութիւն ի կան-  
խեալ աղաւթսն»։ Ա զլուխ. էչամարձակութիւն հայցէ ի բանալ  
քերանոյն, և պատմել զնեղչացն ի վերայ եկեալ».

Եւ արդ՝ այսպէս շուրջանակի զսպեալ ճշմարտութեամբ և ամբացեալ հինգ զգայարանաւք, հրաշափառապէս խնդրէ զհողւոյն առաջնորդութիւն յերկիրն բարութեամն, զի զայլան<sup>575</sup> ծանաւթս կացուցանէ ճշմարիտ քարոզութեամբ զանունն Քրիստոսի, և ապա մատուցէ առ Հայր զիրկեալմն, իբրև զորդիս լուսոյ առաջի Հաւըն երկնաւորի, որում փառք յաւիտեամնու

## [Բ ԳԼՈՒԽ]

Եւ զիանդ եւթն զորոզայ եղեալ յաղաւթս, որ զեւթնաւրեայ արարչութիւնն նշանակէ. և զեւթն աւուրս կենցաղոյս՝ եւթնհազարեան դարուն խորհուրդ, և զքահնայկան աղաւթմնու

Զամենայն ի փառս Աստուծոյ տեսանեմք բարւոք դոլ, և ևս պլայծառագոյն զԱստուծոյ լոյսն զսահմանողն առունչեան և զիշերոյ, որով շարժին ժամանակք եւթնաւրեայ կենցաղոյս:

Ոչ աւտար, այլ Հոգւոյն սրբոյ իմաստիւք համարիմք յաւրինեալ երանելեաց հարցն մերոց կանոն անուանեալ զեւթն զորոզայն, այսինքն, իշխան զոլ համեստութեամբ ընդ յեւթն աւր շարաթուն՝ մի միաւոր զորոզայ զորով, որով քաղաքավարիմք ջանիւ ի վերինն հասանել ի փառս, վեցն՝ ըստ վեցից աւուրց տարժանմանց, իսկ եւթն՝ աւըն հանգստեան, յորում սուրբքն ճգնին պսակեալ ի Քրիստոս. և Ատհնութիւնքն՝ որ ի վերայ, Մարգարէիցն, զութերեակ աւըն, ութերորդ աւը Միաշարաթինու եւ խորհուրդն որ ի նմա ութերեակ, և

8 Տես Ընդարձակ Բ Նախադրութիւն և Բ զլուխ, «Ընդէր եւթն զորդայիւք . . ի հրաշակերտ փառազարդութեանն Աստուծոյ, զամենայն բարիոք զոլ տեսանեմք, ևս առաւել կերապայծառագոյն զնախեղեալն լոյս սահմանող տունչեան և գիշերոյ, որով այժմ շարժին ժամանակաց շրջմունք»:

23 Մարգարէից Օրհնութիւնքը տես Ընդարձակի Ա Նախադրութիւն:

ի սկզբանն փրկութիւն աշխարհի այս յանգումն բերի աղաւթից մերոց <sup>373</sup> և ամենայն տնաւրէնութեան Քրիստոսի, զծնունդն և զմանն և զյարութիւնն. յայս բերէ առաջին տւչութիւն ութաւրեայ թլփատութիւնն արրա-  
5 համեան տոհմին, որպէս զի յետոյ լքանել զեւթնաւրեայ զմտածմունս երկրաքարշ՝ ի յութերորդն գալ Քրիստոսի յարութիւնն. յասացեալսն դնեմք և զքահանայիցն կա-  
տարումն ութաւրեայ առ դրունս խորանին դեգերեալք.  
գոն և այլ տիպք ի յեւթնեկացդ, որ ի յութերորդն հանէ  
10 քրիստոսեան խորհուրդն:

Որպէս աւուրքն բաղարջակերաց կամ ի տաղաւա-  
րահարաց տաւնին գուշակումն, որ ի վերին ժողովէ խորան: Քանզի աստուածորդւովն հետևանամք ի լեառն  
բարձր առանձնանալն ընդ Երրորդութեանն փառաց: Եւ  
15 եւթներեակն լինէր թողութիւն եբրայական խորհրդովն  
ծառայիցն և գեւդիցն: Ըստ որում և որդի թագաւո-  
րազնոյն եաւթերորդ ժամուն ապաքինեալ յախտէն, նման  
որդւոյն մեծի թագաւորին բժշկութեան: Եւ ի նմին  
ժամու հինգշաբաթւոջ աւուրն ժողովին ի սուրբ եկեղե-  
20 ցին որպէս ի վերին քաղաքին խորանն և արձակին երա-  
խայքն ի կապանաց բանսարկուին, և յութերեկին եղե  
նորոգումն յարուցեալ ընդ Քրիստոսի: Այսոցիկ խոր <sup>374</sup>-  
հրդագդած եղե եկեղեցի սուրբ, ըստ աւուրց շաբաթուց  
ի վեր ամբանալ ի ժամանակի լրմանն, և բարեփառ  
25 հաւատով ի Քրիստոս պատուիրէ ամենեցուն զգուշու-  
թեամբ կալ ի կենցաղս և զչարչարանս Քրիստոսի ի մար-  
մին կրել: Արթուն և զուարթունք լինել առաջի նորա,  
մատուցանել բանսարոր պատարագ և հանդերձելոց փա-  
ռացն արժանի լինել ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր,  
30 որում փառք յաւիտ[եանս]:

1 Զ. այս յանգումն բարի. Յով. Իմ. 84. «Աստանօր յան-  
գումն ըերի»: Այսպէս և Սիւնեցին՝ Բնդարձակի մէջ:

## [Գ ԳԼՈՒԽ]

Աւճնութիւն երից մանկանցն նշանակէ զյարութիւնն Քրիստոսի, որով նախահաւըն փրկութիւն եղե. և Աստուած յաւիտենից՝ որ զամենայն հաստատեաց 5 զերևելի և զաներեռյթ բնութիւն արարածոց զոր բանիւ գոյացոյց յոչնչէ, իսկ զմարդն՝ զթագաւորական պատկերն՝ ստեղծ ի պատկեր Աստուծոյ տէրութեանն, ձեռաւք ստեղծմամբն առաւել մեծարեաց, և ի տէրութեան փառս ենան, որ է նմանութիւն և պատկեր Աստուծոյ. 10 սակա որոյ հրամայէ արժանապէս քաղաքավարիլ: Ինքնայաւժար կամաւք ըմպէ զբարին և վայրանկեալ չարին խաբմամբ, զանհաս բարձրութիւնն Աստուծոյ կամեցաւ յափշտակել, յորում անհանդուրժելի աղէտք ի վերայ հասանեն նմա. զի սիրտն ընկալաւ փափականաւք<sup>374</sup>

15 զիրատ չարին, և քարշեալ իբր շղթայիւք ի խորս անդիտութեան, աստուած ինքեան առնել զկործանիչն իւր, և զարտաքին ժառանգէր զիսաւարն, և ընդ մահու կորստեամբ զրաւեցաւ:

Եւ Հայր յաղթեալ մարդասիրութեամբ և ոչ ժուժեալ աղէտիցն, այլ ընդ յառաջ գնաց զթութեամբ քարոզութեանն և գիրկս արկեալ համբուրէր զ[ի] խոզաշաւիդ կոամոլութենէն դարձեալն:

Պատմուճան փառաց և մատանի հրամայէ զգեցուցանել. նորոգել զմարդն ծննդեամբ Որդւոյ իւրոյ ի սուրբ 25 կուսէն, զի անգործ լիցի չարն, ոչինչ գտեալ ի յիւրա-

1. Տես Ընդարձակ Գ Գլուխ. «Աստուած յաւիտենական որ զամենայն հաստատեաց զերևելիս ասեմ և զաներեռյթ բնութիւնս, զոր բանիւ գոյացուցեալ ուսուցանեն մեզ գիրք յոչնչէ իսկ զթագաւորական զպատկերն յետոյ ի պատիւ ինքեան տէրութեանն ստեղծանէր ձեռաւք»:

21 Յոհ. իմ. 86. «զդարձետլն ի խոզագնաց շաւդէ կոամութենէն»: Սիւնեցին՝ Ընդարձակի մէջ,— «զդարձեալն ի խոզաշաւիդ կոամոլութեանց»:

յոցն ի հողեղէնս. ապա զմեծն զանապարագրելի եզնն տայ ի զենումն, որով կոչէ ի հարսանիսն զտիեզերս:

Եւ հանապաղ տաւնէ զծննդեան խորհուրդն և զյառութեան և մի անդամ ի տարւոջն զիսկականն հառաշշելով: Արդ տաւնէ եկեղեցի հանապազաւը զփրկութիւն Աղամայ, զոր արար Միածինն նախ արուբն ի ձեռն քաղղէացւոցն կործանմանն: Եւ երից մանկանցն փառակցութեամբ Որդւոյն Աստուծոյ, վասն զի այր զլուխ է կնոջ:

10 Իսկ «Աստուծ քաւեայն», պաղատանաւք խոնարհութեան ամենայն քրիս<sup>573</sup>տոնէից յաւուր աղուհացիցն և յամենայն չորեքշաբաթ և ուրբաթ պահոց և աղաւ[թ]ք հանապազաւը:

«Ողորմ[ե]այն», աւրինակ ազատութեան կնոջն 15 զլորելոյ և խոնարհութեամբ կուսական ծննդեամբն շնորհելով ազատութիւն իգին, ոչ անաւրէնութեամբ յդանալ և արտմութեամբ ծնանիլ որդիս յանէծս:

Զի լուծաւ դատապարտութիւնն կուսին ծննդեամբն, և ամենայն պատճառք անիծիցն լուծան մահուամբն 20 Քրիստոսի և յարութեամբն. զորա ընդ նմին յարոյց ի թաղմանէ մեղաց, որք ընդ նմին մեռաք մկրտութեամբ, և նոքա համարձակեալ ասեն թէ ընդ յաջմէ Հաւը նստաք պսակեալք. զայս տաւնէ եկեղեցի. և միւս՝ վասն Եւայի զորդեղրութիւնն ընդունել մեղ. այսքան 25 իրաւը ի Քրիստոս միացեալ, անխոնարհելի կալ սրբութեամբ: Երեք «Աստուծ քաւեա՝ տսելով, զիս զմեղատրո»: սուրբ Երրորդութիւն ջնջեա զմեղս մեր: Իսկ յամենայն միաշաբաթուոջ զմեր փրկութեան զաւըն տաւնեմբ. ի միաշաբաթն «Մեծացուցէիւն» Ածածածնէն՝ 30 Եւայի աւետիք, և Աղամայ կենդանութիւն, զսուրբ կուսին ասի զոհութիւն, լի՛ ուր<sup>573</sup>ախութեամբ ասելով, «Ճնծացէ հոգի իմ՝ յարքայութեան քում»:

Իսկ մարգարէական հոգւով աղաղակէ, «Արի Տէր»

30 Ղուկ. Ա. 46.

32 Սաղ. ԽԳ. 27.

ի ծոցոյ Հաւը ի փրկութիւն մեղ. և մի թողուր իսպառ  
զկորուսեալքս, և «Տէր յաւել ինձ վութա»: Իսկ «Երի  
Տէր»ասելով, զահաւոր դատաստանէն նշանակէ. միաբան  
ի դէմս մարմնացեալ Բանին ասեմք զյառնելն և զնըս-  
տելն: Իսկ ոթագաւորեսցէ Տէր» ասելով, երանի որ  
յուսա ի նա. յայտ է թէ, «Զամենայն ինչ ննազանդ  
արար [ի] ներքոյ ոոից նորա» և «զգենու վայելշութիւն»:  
զարդարսն ասէ և զոուրբ կուսանսն և զճշմարիտ հաւա-  
տացեալմն և զկրաւնաւորսն և զարեամբ սրբեալ նա-  
10 հատակսն միացեալ ի սէր բարերարին Աստուծոյ: Արդ  
կանայք որ առաջի խաբեցան հեղդացեալ ի մեղս, ա[յ]ժմ  
զգաստացեալ ի ձեռն յարութեանն Քրիստոսի, լինին  
նախատեսք և քարոզք յառաջ քան զառաքեալմն, «Զի  
ուր առաւել եղին մեղքն, առաւելան շնորհքն»: Կամ ըստ  
15 Աւետարանին գալ բարեկամին և խնդրել երիս նկանակս,  
որ զերրորդութիւնն նշանակէ շարժել յողորմութիւն եղ  
ի յոյս. և եթէ, «Սիր<sup>376</sup>ելիքն իմ ի սկզբանէ», և սիսնի  
աւետարանէ զփրկութիւն գտանել և զցնծութիւն: Երկու  
Աւետարանն՝ զաստիացս ունի զաւրինակ և զհանողերձե-  
20 լոցն: Եւ ստոյգ ցուցանէ աւետարանիչն զյարութիւնն  
Քրիստոսի, և զվէմն՝ ուր եղաւ տէրն. և յամաւթ լիցին  
հերձուածողքն և անհաւատքն. և առա ընկալեալ զլոյս  
մեծ գիտութեան քարոզութեամբ Աւետարանին, որպէս  
յԱստուծոյ վկայեալ զուարծացեալք յուրախութիւն փա-  
25 ռացն. հանապաղ զախորժելի զԱւրինութիւն երից Ման-  
կանցն, հրաման տայ նստելոցս ի խաւարի անզիտու-  
թեան գալ առ լոյն ճշմարիտ, և զոուրբ ձեռս համ-  
բառնալ առ փրկիչն Քրիստոս: Եւ երկրորդ Աւետարանն  
զմիւսանդամ՝ գալստեանն ունի ցուցումն. զի կարկին

2 Սաղ. Կթ 1, Բնդարձակի մէջ, «Տէր յաւգնել ինձ վութա».

4 Զ. մարմնացո.

6 Սաղ. Ը 7.

7 Սաղ. ՂԲ 1.

13 Ա. Հոռվմ. Ե. 20,

24 Քզ. Զուարճացեալքս.

բերանք անհաւատիցն, որք ոչ հաւատան յարութեան մեռելոց, իսկ շարժել Սուրբ Նշանին և գնալ ի գերեզմանն, որ առաւել քան զայլ աւուրցն կատարին, և Աւրհնութիւն Դաւթի՝ առ եկեղեցիս, աւրհնութիւն է 5 գերեացն, որք դարձան ի Բարելոնէ, և ժողովեցին զարարածս, և յերկինս եղ յերկիր, և գոհացան զԱստուծոյ. և գոհութիւն հեթանոսաց, որք արձակեցան ի կոոցն: Եւ փոխն «Աւրհնեցէք զտէր յաւրհն<sup>376</sup>ութիւն նոր» և «Ուրախ եղեւ իսրայէլ յարարիշն իւր» զոր Պենդակոս:  
 10 տէին ասեմք ի խորհուրդ Հոգւոյն, յորում առաքեալքն ընկալան զփշումն Հոգւոյն սրբոյ, զոր Աղամ հեռացոյց ի մարդկանէ: Եւ երրորդ փոխն՝ զճշմարիտ պատկեր մեծի աւուրն անստուերի՝ «Աւրհնեցէք զԱստուծ ի որբութեան նո[քա]», յանանցանելին բերի խորհուրդս:  
 15 Եւ «Փառք ի բարձունս» զանտի կենացն և մարդկան դասակցութիւն սուրբ Երրորդութեանն: Զայս եկեղեցի տաւնէ ի ներկայս զանաւրէնութիւնն Քրիստոսի. և որ առաջնորդն լինի բարձրագոյն փառս տուեալ խորհուրդսն: Իմաստնականն գոչէ «Առաւաւտոն երգ», որ զաւուրն  
 20 ցուցանէ զխորհուրդ: Եւ զքաղողն գոհութիւն ծաւալեցուցանէ, և աղաչէ զՀայրն ամենակալ, որ սքանչելեաւք պահէ զազդս մարդկան, և ամենայնի յաղթող արժանաւորեացէ. և պահեացէ զեկեղեցի իւր սուրբ մինչև ի գալուստ Որդւոյ իւրոյ: Եւ քահանայն մատուցանէ  
 25 զաղակթս ժողովրդեանն առ Յատուած, հաստատուն լինել ի կամս պատուիրանին, առաքելական խաղաղութեամբ վայելել ի կենցաղս, և լինել տաճար սուրբ Երրորդութեանն, և փառս տալ միածնի Որդւոյն աստուծոյ:  
 (Նարունակելի)

Սահակ Վարդապետ

8 Սաղ. Ճեթ.

12 Երրորդ փոխն Սաղ. ՃԵ. Օրհնեցէք զած ի սրբութեան նորա.

19 Քերես՝ կոչի.

27 Ա. վայելես.